

ՅԵՏԱԲԵՐՔՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆՈՒԱԶԻ

Փոխվարչապետի պաշտոնակատար Սաստա Շամի յայտնեց, որ Լիբանանի հանդեպ համաշխարհային հետաքրքրությունը սկսած է նուազիլ: Խօսելով Արժոյթի միջազգային հիմնադրամին հետ հաւանական համաձայնութեան մասին, Շամի ցաւ յայտնեց, որ այդ համաձայնութեան կնքումը մօտալուտ չէ:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵՆԷ ՅԱՐՁԱԿՈՒՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Իսրայէլեան բանակը երկ յայտարարեց, թէ ամբողջացուցած է Լիբանանի հետ ճակատին վրայ պաշտպանութենէ յարձակումի անցնելու նախապատրաստութիւնները: Ըստ յայտարարութեան, առնչակից ուժերը ստուգած են զինամթերանոցները եւ անհրաժեշտ աշխատանքներ կատարած՝ անհրաժեշտութեան պարագային պահեստային զինուորներ արագօրէն զինուորագրելու եւ առաջնագիծ ուղարկելու համար:



Իսրայէլեան օդուժը երկ արեւածագին վերստին հարձակեց Պեքաայի հիւսիսային շրջանները, թիրախաւորելով Սուրիոյ հետ սահմանային արեւելեան լեռնաշղթային վրայ գտնուող Շաարա եւ Սուֆրի շրջանները՝ Պաւլպաքէն դէպի արեւելք: Որպէս հակադարձութիւն Պաւլպաքի շրջանին ուղղութեամբ կատարուած յարձակումներուն, Յըզպալլա յայտարարեց, որ թիրախաւորած է Եռավ շրջանին մէջ տեղակայուած իսրայէլեան հրթիռային, հրետանային եւ հակաօդային պաշտպանութեան մարտկոցներ, անոնց պատճառով լուրջ վնաս:

Իսրայէլեան բանակի բանբեր Ալիխայ Ատրահի հաստատեց Պաւլպաքի մէջ թիրախներ հարուածելու տեղեկութիւնը եւ նշեց, որ օդուժին թիրախաւորած էր զիրքերը Յըզպալլայի հակաօդային պաշտպանութեան ենթակառուցները: Անոր համաձայն, յարձակումը եղած է որպէս անօդային թռչող սարքի ջախջախումին հակադարձակութիւն: Նշեց, որ Շաբաթ երեկոյեան Յըզպալլա յայտարարած էր իսրայէլեան «Յերմեզ-900 տիպի արդիական անօդային սարք մը հակաօդային կրակոցներով վար առնելու մասին»:

ՊԸՐԻ-ՃՈՍՊԼԱԹ ԶԱՆԴՊՈՒՄ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի Այն Թիւնի մէջ երկ ընդունեց նախկին երեսփոխան Ռալիտ Ճոմպալթը, որուն հետ քննարկեց լիբանանեան ու շրջանային նորագոյն զարգացումները: Ճոմպալթ մաղթեց, որ շուտով լու-



ծում գտնուի նոր նախագահի ընտրութեան հարցին: Ան կոչ ուղղեց վերադառնալու 1701 բանաձեւի գործադրութեան եւ 1949 թուականի զինադադարին: «Նախագահութեան թղթածրարը առնչուած չէ Կազայի հարցին: Զակառակը երբեք չէմ լսած, որովհետեւ նոր նախագահի ընտրութիւնը լիբանանցիներուն վերաբերող թղթածրար մըն է, սակայն երկխօսութիւնը մերժելով ոմանք կը սխալին», ըսաւ Ճոմպալթ:

ԱՌԵՒՆԳՈՒՄ ԺՂԵՅԼ ԳԱՄՈՒՆ ՄԷՋ

Ապահովական տեղեկութիւններ երկ գիշեր նշեցին, թէ անծանօթ զինեալներ ժղայլ գաւառի հարպէ գիւղին մէջ առեւանգած են Լիբանանեան ուժեր կուսակցութեան ժը-



պէլի համակարգող Փասթալ Սլէյմանը եւ գայն փոխադրած են անորոջ ուղղութեամբ: Կարծ ժամանակ ետք, կուսակցութեան նախագահ Սամիր ժաաժայի գրասենեակի տնօրէն Էլի Պրաղիտ եւ Ազգային ազատ հոսանքի երեսփոխաններէն Սեզար Ապի Խալիլ ժամանեցին Մասթիթա շրջանի Լիբանանեան ուժերու կեդրոնը՝ հետեւելու համար առեւանգումի թղթածրարին:

ՉԻՆԱԴԱԴԱՐ ՅԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈՐՉ

Կազայի մէջ Իսրայէլի եւ Գամաի միջեւ շարունակուող պատերազմը բոլորեց 6-րդ ամիսը, սակայն տակաւին չկան հանդարտեցումի նշաններ: Իսրայէլի վարչապետ Պենիամին Նեթանիահու չափազանցուած համարեց Գամաի պահանջները եւ յայտնեց, որ իրենք կը մերժեն յայտարարել զինադադար, եթէ նախ ազատ չարձակուին իսրայէլացի գերիները: «Մենք պատրաստ ենք պաշտպանութեան եւ յարձակումի: Մենք կը գտնուինք յաղթանակէ քայլ մը հեռու», շեշտեց Նեթանիահու: Այսուհանդերձ, տեղական լրատուամիջոցներ նշեցին, որ Նեթանիահուի



զխաւորած պատերազմական սեղմ կառավարութիւնը որոշած է Մոսատի ղեկավարին զխաւորութեամբ պատկրակութիւն մը գործուղել Գահիրէ՝ մասնակցելու համար Կազայի մէջ զինադադար յայտարարելու հերթական բանակցութիւններուն: Իսրայէլեան լրատուամիջոցներ չբացառեցին, որ Ֆիթրի տօնին առթիւ զինադադար յայտարարուի Կազայի մէջ:

Գետնի վրայ, իսրայէլեան բանակը յայտարարեց, թէ 98-րդ զօրախումբի բոլոր գումարտակները քաշուած են



Կազայի հարաւային հաս Եունէս շրջանէն, ուր շաբաթներ շարունակ մասնակցած էին ռազմական ծանր գործողութիւններու: Ուստի, Կազայի մէջ երեկուան դրութեամբ մնացած է իսրայէլեան միայն մէկ գումարտակ, որ կը գործէ Կազայի հարաւը հիւսիսէն բաժնող հատուածին մէջ: Պաշտպանութեան նախարար Եռավ Կալանթ յայտնեց, որ զօրախումբերու վերատեղակայումին նպատակն է նախապատրաստուիլ Ռաֆահի մէջ սպասուած յաւելեալ գործողութիւններու: Այսուհանդերձ, բանակի սպայակոյտի պետը շեշտեց, որ Կազայի մէջ պատերազմը պիտի շարունակուի եւ եզրափակումը մօտալուտ չէ:

ԻՐԱՆ ԿԸ ՍՊԱՌԱՅ

Կ'ակնկալուի, որ Իրանի արտաքին գործերու նախարար Յըսէյն Ամիր Ապտոլլահեան այսօր ժամանէ Դամաս-



կոս՝ սուրիական ղեկավարութեան հեր քննարկելու Դամասկոսի մէջ Իրանի հիւպատոսարանի թիրախաւորումն ու անոր յաջողած զարգացումները: Նշեալ հարուածէն ետք, Թեհրան տեւաբար կը սպառնայ «յարմար պահուն» հակադարձել եւ ծանր հարուած տալ Իսրայէլին: Այս ծիրին մէջ, Իրանի ԻՍՆԱ լրատու գործակալութիւնը ցուցադր-



րեց տեղական արտադրութեան 9 տեսակ հրթիռներ, որոնք կարողութիւն ունին հարուածել իսրայէլեան թիրախներ: Յիշեցնեց, որ Դամասկոսի մէջ Իրանի հիւպատոսա-

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶՕՐԱԿՅՈՒԹԻՒՆ ՀԱՅ-ԱՏՐՊԷՅՃԱՆԱԿԱՆ ՀՈՒՎՈՎՈՅԹԻՆ

Միացեալ Նահանգներու Արտաքին գործերու նախարարութիւնը յայտարարութեամբ մը վերահաստատեց, որ Ռաշիսկթըն կը զօրակցի Զայաստան-Ատրպէյճան խաղաղ բանակցութիւններուն: Ամերիկացի խումբ մը ծերակուտականներ իրենց կարգին նամակ յղեցին արտաքին գործերու նախարար Անթոնի Պլինքընին, պահանջելով աշխատանք տանիլ՝ ապահովելու Արցախի Զանրայե-տութեան նախկին ղեկավարներուն ազատ արձակումը:

Նախարարի Պլինքընի Եւրոպայի ու Եւրասիոյ հարցերու օգնական Ճէյմզ Օպրայըն յայտնեց, թէ իրենք Երեւանի ու Պաքուի կը շարունակեն հաշտութեան կոչ ուղղել: Ան բացատրեց, թէ 5 Ապրիլի Պրիքսէլի մէջ տեղի ունեցած հայ-Եւրոպական-ամերիկեան ժողովը կը նպատակադրէ կեդրոնական Զայաստանի տնտեսական զարգացումին, քաղաքական բարեփոխումներուն եւ մարդասիրական օգնութիւններ փոխանցելու հնարաւորութեան վրայ: Օպրայընի համաձայն, Միացեալ Նահանգներն ու Եւրոմիութիւնը վճռականօրէն կ'աջակցին Զայաստանի անկախութեան, գերիշխանութեան ու տարածքային ամբողջականութեան: Ըստ ամերիկացի պաշտօնատարին, Ատրպէյճանի նախագահը տեղեկացուած է ժողովի նիւթերուն մասին եւ ըմբռնած է գանտը:



Այսուհանդերձ, Ատրպէյճանի նախագահ Իլիհամ Ալիեւ կարծիք յայտնեց, որ Պրիքսէլի եռակողմանի հանդիպումը Զարաւային Կովկասի մէջ կը ստեղծէ սպառնալիքի հերթական աղբիւր: Ալիեւի համաձայն, ժողովը կը ստեղծէ բաժանարար գիծեր եւ կը մեկուսացնէ Ատրպէյճանը:

Ռուսիոյ Արտաքին գործերու նախարարութիւնը եւս մեկնաբանեց Զայաստանի պրիքսէլեան հանդիպումը: «Այդ կը դիտարկենք որպէս Զարաւային Կովկասը աշխարհաքաղաքական դիմակայութեան մէջ ներքաշելու արեւմտեան հերթական փորձ», նշուեցաւ Ռուսիոյ Արտաքին գործերու նախարարութեան յայտարարութեան մէջ: Ըստ Մոսկուայի, արտատարածաշրջանային ուժերու անպատասխանատու եւ ապակառուցողական միջամտութիւնը Զարաւային Կովկասի հարցերուն, նաեւ շրջանի երկիրներուն միջեւ սեպ խրտելու փորձերը կրնան ունենալ շատ բացասական հետեւանքներ՝ ազդելով տարածաշրջանի կայունութեան, անվտանգութեան եւ տնտեսական զարգացումին վրայ, բացայայտելով բաժանարար նոր գիծեր», յայտարարեց Մոսկուա:

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

Եւրոյան ծնածողովի ղեկավար Ուրսուլա Վոն տեր Լայէն յայտարարեց, որ Եւրոմիութիւնը յառաջիկայ չորս տարիներուն Երեւանին պիտի տրամադրէ 270 միլիոն եւրօ դրամաշնորհ: «Պիտի աջակցինք, որպէսզի Զայաստանը ըլլայ աւելի դիմակայուն: Մենք պիտի զօրակցինք փոքր եւ միջին ընկերութիւններուն, որպէսզի անոնք զարգանան եւ նոր շուկաներ մուտք գործեն», ըսաւ Եւրոպացի պաշտօնատարը:

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԵՆ ԴՈՒՐՍ

Կարմիր Խաչի միջազգային կոմիտէի գրասենեակը այլեւս Ստեփանակերտի մէջ չէ: Զայաստանի մէջ Կոմիտէի բանբեր Չառա Ամատիան յայտնեց, որ գրասենեակը



բռնագրաւուած քաղաքէն փոխադրուած է ատրպէյճանական Պարտա: Նշեց, որ Արցախէն բռնի տեղահանուած 84 հազար մարդ պաշտօնապէս հաշուարկուած է Զայաստանի հասցէներով, 82 հազար մարդ ստացած է փախըստական ժամանակաւոր պաշտպանութեան վկայական, իսկ միայն 1600 հոգի դիմած է տիրանալու Զայաստանի քաղաքացիութեան:

ԱՆԿՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ «ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՏՐՊԵՅԱՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ՍՐՈՒՄԸ ԱՐԵՒԻ ԸՆՏ ԿԱՆԵԱԿ Է ՌՈՒՄԻԱՅԷՆ, ՔԱՆ՝ ԱՏՐՊԵՅԱՆԷՆ»

Անվտանգության խորհուրդի քարտուղար Արմեն Գրիգորեան, արձագանգելով Ռուսիոյ Արտաքին գործերու նախարարութեան բանբեր Մարիա Զախարովային՝ ըսաւ, որ Ատրպեյճանի հետ յարաբերութիւններու սրումը աւելի շատ կախեալ է Ռուսիայէն, քան՝ Ատրպեյճանէն:



Յիշեցնելը, որ Զախարովա նախորդ օրերուն զգուշացուցած էր, որ Ռուսաստանի եւ Ատրպեյճանի միջեւ նոր սրումը կախեալ է այն հանգամանքէն, թէ Երեւան որքանո՞վ թոյլ պիտի տայ Եւրոպական միութեան եւ Միացեալ Նահանգներուն՝ «քայքայիչ ազդեցութիւն ունենալու տարածաշրջանին մէջ իրավիճակի, նաեւ՝ երկու երկիրներու յարաբերութիւններուն վրայ»:

«Այդ կը նշանակէ, որ Ատրպեյճանի հետ սրումը աւելի շատ կախուած է Ռուսաստանէն, քան թէ Ատրպեյճանէն: Կրնանք այս յայտարարութենէն այդ ենթադրել, եւ այդ մտահոգիչ է շատ», նշեց Գրիգորեան:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՏԵՂԱԿԱԼԸ ԵՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵԿԱՎԱՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԱԾ Է ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՎԵՐՁԻՆ ՉԱՐԿԱՅՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործերու նախարարի տեղակալ Պարոյր Յովհաննիսեան ընդունած է Հայաստանի մէջ Եւրոպայի խորհուրդի գրասենեակի նորանշանակ ղեկավար Մաքսիմ Լոնկանկէն՝ ԵՆ Երեւան:



Եան գերասենեակի ղեկավար նշանակելու մասին Եւրոպայի խորհուրդի Գլխաւոր քարտուղարի նամակին բնօրինակը յանձնելու առնչութեամբ: Պարոյր Յովհաննիսեանը շնորհաւորած է Մաքսիմ Լոնկանկէն Հայաստանի մէջ Եւրոպայի խորհուրդի գրասենեակի ղեկավարի կարեւոր առաքելութիւնը ստանձնելու առթիւ համոզմունք յայտնելով, որ ՀՀ ժողովրդավարական հիմնարկներու ամրապնդման ու շարունակական բարեփոխումներու նպատակով ՀՀ իրաւասու գերատեսչութիւններուն եւ կառոյցներուն հետ Եւրոպայի խորհուրդի երեսնեան գրասենեակին համագործակցութիւնը նոր թափով կը զարգանայ:

Պարոյր Յովհաննիսեանը գոհունակութիւն յայտնած է Եւրոպայի խորհուրդին հետ Հայաստանի սերտ եւ դրական արդիւնքներ արձանագրող համագործակցութեան առնչութեամբ՝ կարեւորելով Հայաստան-Եւրոպայի խորհուրդ 2023-2026 թուականներու Գործողութիւններու ծրագրի արդիւնաւետ իրականացումը եւ նշելով, որ այն կ'օժանդակէ նաեւ ՀՀ-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագրի յաջող կենսագործման՝ ի նպաստ Հայաստանի մէջ ժողովրդավարութեան, մարդու իրաւունքներու եւ իրաւունքի գերակայութեան յառաջխաղացման:


Նախարարի տեղակալը բարձր գնահատած է Եւրոպայի խորհուրդի Գլխաւոր քարտուղարին, Մարդու իրաւունքներու յանձնակատարին, ՄԻԵԴ-ի եւ ԵՆ կանոնադրական մարմիններուն արձագանգներն ու գործողութիւնները՝ միտուած տարածաշրջանային մարտահրաւերներուն հետեւանքով յառաջացած մարդասիրական խնդիրներու հասցեագրման:

Պարոյր Յովհաննիսեանը զրուցակցին ներկայացուցած է նաեւ տարածաշրջանային վերջին զարգացումները՝ ընդգծելով ՀՀ իրերդրոշումները առանցքային հարցերու շուրջ:

«ԱՄՆ ՄԶԳ-Ի ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՍԵՐՏ ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ» Կ'ԸՍԵ ՍԱՄԱՆԹԱ ՓԱՌԸՐ

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան Պեյճիքայի մէջ՝ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան մէջ, հանդիպում ունեցած է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալութեան ղեկավար Սամանթա Փաուլըրի հետ:

Զրուցակիցները քննարկած են ՀՀ կառավարութեան եւ ԱՄՆ ՄԶԳ-ի միջեւ համագործակցութեան, ընթացիկ ծրագրերուն եւ յառաջիկայ նախաձեռնութիւններուն վերաբերող հարցեր: Մասնաւորապէս, անդրադարձ կատարուած է Հայաստանի մէջ իրականացուող ժողովրդավարական բարեփոխումներուն, տարբեր ուղղութիւններով հաստատութեան բարեկարգումներու արդիւնաւետ իրականացման ԱՄՆ ՄԶԳ-ի կողմէ հետագայ աջակցութեան:



Վարչապետը ընդգծած է, որ ՀՀ կառավարութիւնը հաստատակամօրէն պիտի շարունակէ հետեւողական քայլերը բարեփոխումներու ուղղութեամբ եւ ընդգծած է, որ այն ունի ռազմավարական նշանակութիւն:

Սամանթա Փաուլըր նշած է, որ ԱՄՆ ՄԶԳ-ն պիտի շարունակէ սերտ համագործակցութիւնը Հայաստանի հետ եւ պատրաստ է շարունակական աջակցութիւն ցուցաբերելու ՀՀ կառավարութեան ծրագրերուն՝ ի նպաստ ժողովրդավարութեան ամրապնդման եւ զարգացման:

Զրուցակիցները անդրադարձած են Լեռնային Ղարաբաղեան բռնի տեղահանուած անձերու մարդասիրական խնդիրներուն եւ անոնց լուծման ուղղութեամբ քայլերուն:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ներկայացուցած է ՀՀ կառավարութեան կողմէ իրականացուած ծրագրերն ու հետագայ քայլերը:

Վարչապետը կարեւորած է միջազգային գործընկերներու, այդ շարքին ԱՄՆ-ի կողմէ բռնի տեղահանուածներուն ցուցաբերուող աջակցութիւնը եւ ընդգծած է անոր շարունակական ապահովման անհրաժեշտութիւնը:

Այս ծիրին մէջ քննարկուած են բռնի տեղահանուածներուն աջակցութեան հետագայ քայլերուն, մասնաւորապէս, բնակարանային ապահովման խնդիրին վերաբերող հարցեր:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐՅԱՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ ԵՒ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆՊԱՄՆԵՐԸ

Ն.Ս.Ս.Ս. Գարեգին Բ. ծայրագոյն պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ ընդունեց Արցախի թեմի Թեմական խորհուրդի անդամները՝ ուղեկցութեամբ թեմակալ առաջնորդ Գերաշնորհ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամեանի:



Հանդիպման ընթացքին քննարկուեցան Արցախի ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան, անոնց ընկերային կացութեան եւ բարոյա-հոգեբանական վիճակին առնչուած հարցեր: Անդրադարձ կատարուեցաւ նաեւ Եկեղեցւոյ կողմէ իրականացուող աջակցութեան ծրագրերուն:

Հայոց Հայրապետը յորդորեց թեմակալ առաջնորդին եւ Թեմական խորհուրդի անդամներուն, որպէսզի շարունակեն Մայր Աթոռի համապատասխան կառոյցներուն եւ Սփիւռքի թեմերուն հետ համագործակցաբար հնարաւոր բոլոր միջոցները գործադրել միջազգային ու միջեկեղեցական կառոյցներուն առջեւ բարձրձայնելու Արցախի ժողովուրդի իրաւունքներու ապահովման, Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգութեան պահպանութեան հիմնախնդիրները:

Անդրաժեշտ նկատելով թեմական կառոյցներուն պահպանութիւնը՝ Նորին Սրբութիւնը կարեւորեց նաեւ արցախահայերու համախմբման, ոգիի զօրացման եւ ծառայած մարտահրաւերներու յաղթահարման ուղղութեամբ իրականացուող ծրագրերուի շարունակականութիւնը:

Ն.Ս.Ս.Ս. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՇՆՈՐՀԱՌՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶԸ ԱՐԵՏԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻՈՒԿ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու շնորհաւորանքն ենք բերում համայն մեր ժողովրդին, ի մասնաւորի բոլոր տիկնանց, օրհորդներին եւ մայրութեան բերկրանքին սպասող կանանց՝ Սուրբ Աստուածածնի Աւետման հոգեւորոգ տօնի առիթով:

Աստուածամայրը իր առաքինի կերպարով, եզուրթեամբ ու աստուածփրութեամբ բարի օրինակ է բոլոր մայրերին ու օրհորդներին, ովքեր գովելի ջանքեր ու նուիրում են բերում իրենց ընտանիքների բարօրութեանը եւ մեր ժողովրդի յառաջընթաց կեանքին:

Սիրելիներ, փորձութիւններով ուղեկցուող այս օրերին, երբ ազգային մեր սպասումներում մշտադրօն ակնկալութիւնը ունենք Տիրոջ օգնականութեան, Սուրբ Կոյսին ուղղուած հրեշտակի խաղաղեցնող աւետիսը հնչում է նաեւ ձեզ համար. «Աստուած ձեզ հետ է»: Ձեր սրտերում ամուր պահեք առ Աստուած հաւատարմութիւնը, զօրացեալ մնացեք հաւատի, յոյսի ու սիրոյ մէջ, որպէսզի Աստուծոն ապահոված ու միմեանց աջակցի՝ կարող լինեք դիմակայել բոլոր մարտահրաւերներին եւ դէպի վերելք առաջնորդեք ձեր կեանքը:

Սիրելի մայրեր եւ քոյրեր, Միածնաւեց Տաճարի Սուրբ Խորանի առջեւ աղօթում ենք, որ Աստուածամօր բարեխօսութեամբ Բարձրեալն Աստուած իր օրհնութեան եւ խնամքի ներքոյ պահի ձեզ եւ ձեր ընտանյաց անդամներին, որպէսզի ձեր սրտերում տեղ չգտնեն յուսահատութիւնը, ցաւն ու տրտմութիւնը: Թող Տերը իր գթառատ սիրով խաղաղ ու բարօր կեանք պարգեւի մեր ժողովրդին՝ ի հայրենիս եւ ի սփիւռս աշխարհի:

ԱՐՈՒԵՏԱԳԵՏՆԵՐԸ ՇՆՈՐՀԱՌՈՐԱԾ ԵՆ ԿԻՆ ՉԻՆՈՒՐՆԵՐԸ ՍԱՅՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻՈՒ

Բանակ-հասարակութիւն կապի ամրապնդման ուղղուած միջոցառումներու ծիրին մէջ, 5 Ապրիլին, ՀՀ Պաշտպանութեան նախարարութեան զօրամասերն սկսեցին մէջ հիւրընկալուած են երաժշտահան Ռուպերթ



Ամիրխանեանը, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նուագախմբի գեղարուեստական ղեկավար եւ գլխաւոր խմբավար Էտուարտ Թոփչեանը, նուագախումբի տնօրէն Նորայր Նազարեանը:

Մայրութեան եւ գեղեցկութեան տօնին ընդառաջ՝ արուեստագետները շնորհաւորած են կին զինուորները, մաղթած են բարի ծառայութիւն եւ վստահութիւն յայտնած են, որ կանայք զինուած ուժերուն մէջ իրենց ներկայութեամբ դրական օրինակ եւ խթան կը հանդիսանան միւսներուն համար, կը նպաստեն բանակի մարտունակութեան ամրապնդման, աւելի նուիրուած եւ համախմբուած ծառայութեան կազմակերպման:

Հանդիպման աւարտին Ռուպերթ Ամիրխանեանը զինուորներուն համար կատարած է Հայաստանի Հանրապետութեան ձինուած ուժերու օրհներգը՝ «Երազի իմ երկիր հայրենիս»:

**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՄԵԿՈՒԹԱՅԻՆ
ՄԻՈՒԹԻՆ**

**ԲԱՑԱՌԻԿ
ՇՐՋԱՊՏՈՅՑ**

- ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԺՊԵՅԼԻ «ԹՈՉՆՈՑ ԲՈՅՆ»-Ի ԹԱՆԳԱՐԱՆ
- ՍՐԲՈՒՀԻ ՌԱՇԽԱ ԵՒ ՍՔ. ՀԱՐՏԻՆԻ ՈՒՆՏԱՏԵՂԻՆԵՐ
- ԺԸՊԵՅԼԻ ՇՈՒԿԱՅ

ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 11 ԱՊՐԻԼ 2024-ԻՆ

ՄԵԿՈՒՄ ԱՌԱՌՏԵԱՆ ԺՄԱՆ 9:00-ԻՆ, ՀԱՃԸՆԵՆ (ՆԱԽԱՃԱՍԵՆ ՆԵՐԱՌԵԱԼ)

**ՁԵՐ ՏԵՂԵՐԸ ԱՊՄՅՈՒՄԵՆԻ ՀԱՄԱՐ ԿՐՆԱԸ ԴԻՄԵԼ
03-381132, 79-185644 ԹԻՒԵՐՈՒՆ:**

«Արարատ» օրաթերթը կը ներկայացնէ «Մետիամարտ»-ի «Ծանօթ-անծանօթ քաղաքներ» շարքը: Յաճախ միմեանց կ'ըսեն, որ «մենք մեր երկիրը չենք ճանչնար», հիմնականին մէջ սկստի ունենալով գեղատեսիլ վայրերը, բնական եւ ճարտարապետական յուշարձանները: Սակայն կրնանք պնդել, որ քիչ բան գիտենք նաեւ այն քաղաքներուն մասին, որոնք շատ մօտ են Երեւանին: Ուստի այս շարքով պիտի փորձենք որոշ չափով փակել այդ բացը եւ ներկայացնել 10 քաղաքներ, որոնք զբօսաշրջական չեն համարուիր (բացառութեամբ Էջմիածնի), սակայն ունին իրենց հմայքը:

ԾԱՆՕԹ-ԱՆԾԱՆՕԹ ՔԱՂԱՔՆԵՐ՝

ԱՇՏԱՐԱԿ

Քասախ գետի ափին գտնուող Աշտարակը հարուստ է իր բնութեամբ, տեսարժան վայրերով, պատմամշակութային կոթողներով, մեծանուն գործիչներով եւ, ամենակարեւորը՝ հիւրընկալ ու ջերմ մարդոցով:



Աշտարակի մասին առաջին յիշատակումները արձանագրուած են 9-րդ դարուն: Հին ժամանակ այն մտած է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Արագածոտն գաւառին մէջ: Քաղաքի անուան ծագումը կը կապեն ասորական Իշթար՝ սիրոյ եւ պտղաբերութեան դիցուհի փինիկեան «Աշթար» արտայայտչածէի հետ: Աշտարակի մէջ մինչ օրս պահպանուած են վաղ միջնադարեան մեծարժէք յուշարձանները:

Աշտարակը այսօր

Աշտարակը կը գտնուի Երեւանէն ընդամենը 13 քիլոմետր հեռավորութեան վրայ: Արագածոտնի մարզի կեդրոնն է, քաղաք հռչակուած է 1963-ին:

1950-ականներուն, «Թագա» կամուրջի կառուցումէն յետոյ իրար միացան Աշտարակ քաղաքը եւ Քասախի ձախ ափի տարածքները: Այսօր միմեանցէն կ'առանձնան Աշտարակ, Մուղնի, Ձախ Ափ, Գիտաւան, Բագաւան թաղամասերը:



1970-ականներուն Աշտարակի մէջ տեղի ունեցաւ մարդոց մեծ ներհոսք Սփինդըն եւ Ջաւախքէն՝ բնակութիւն հաստատելով ձախ ափին: Բարձրայարկ շէնքեր կառուցեցան՝ այդ տարիներուն բնորոշ խորհրդային ճարտարապետութեան ոճով:

Վերջին տարիներուն Աշտարակի մէջ բնակութիւն հաստատած են նաեւ սուրիահայերը: Անոնց համար սկսան կառուցել «Նոր Հայէպ» թաղամասը:

Երկար տարիներ Աշտարակի մէջ կը գրգռէ չոր միլիոններու պատրաստմամբ, խաղողագործութեամբ, կայ թռչնի միսի եւ ձուի արտադրութիւն:

Քաղաքի փողոցներով զբօսելով

Աշտարակի հետ ծանօթութիւնը լաւ է սկսիլ հրապարակէն, ուր՝ Մշակոյթի տան հարեանութեամբ, տեղադրուած է



Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսէս Աշտարակեցիի յուշարձանը, որուն հեղինակներն են քանդակագործ Գետիկ

Պաղտասարեանը եւ ճարտարապետ Ճիմ Թորոսեանը: Նոյն հրապարակին վրայ կանգուն մնացած են գիւղի մեծահարուստներու՝ Մուխսոնց եւ Գաբրելեց տուները: Հրապարակի կեդրոնին տեղադրուած են ծառերու տեսքով շատուղաներ:

Հրապարակէն քիչ ներքեւ կը գտնուին արձակագիր, հրապարակախօս Վարդգէս Պետրոսեանի յուշարձանը, որ հազիւ անցած կը սկսի Ղափանցեանի անունը կրող, կամ, ինչպէս կ'ըսեն, «Թանգարաններու փողոցը»: Ժամանակին այստեղ կային քանի մը թանգարաններ, որոնցմէ կը գործէ միայն ակադեմիկոս Նորայր Սիսակեանի տուն-թանգարանը:

Աշտարակը բաժնուած է աջ եւ ձախ ափերու: Աւելի վաղ ժամանակներուն բնիկ աշտարակցիները հիմնականին մէջ կ'ապրէին աջ ափի սեփական տուներու մէջ:



Փողոցներու երկայնքով այսօր ալ կանգնած են տարիքը առած ընկուզեմիները, որոնց շնորհիւ ալ յայտնի դարձած է Աշտարակի պոպոկը: Մեպտեմբերին Աշտարակի մէջ պոպոկ գտնելը անհնարին է՝ ընկուզեմիները Հոկտեմբերի վերջը կը սկսին թափ տալ: Ծառերուն համար այդ գործընթացը լաւ ընտանեկան աւանդոյթ է: Ստացուած բերքէն ընտանիքներուն մէջ այնուհետեւ պոպոկի անուշ եւ քաղցր սուճուկ (շարոց) կը պատրաստեն: Ընկուզեմիներէն բացի, որոշ տուներու պատշգամբներուն «ուրուած» են խաղողի վազերը:

Քաղաքի շուկան կը գտնուի ձախ ափին՝ «Թագա» կամուրջէն այն կողմ: Այստեղ ապակեպատ թոնրատուն կայ եւ կարելի է հետեւիլ հացթուխ կանանց աշխատանքին:

Ձորի բերանին կը գտնուի Երկրորդ աշխարհամարտին զոհուածներու յուշարձանը: Ժամանակին այստեղ մեծ այգի էր՝ լողաւազանով եւ սրճարաններով:

Աշտարակի ձորը

Երբ կը լսեն Աշտարակի ձորի մասին, հիմնականին մէջ կը պատկերացնեն հիւրանոցային համալիրը, ջրաշխարհը եւ ճաշարանները: Մենք անտեսեցինք բոլոր ժամանակակից վայելքները եւ իջանք 17-րդ դարի եռակամար կամուրջին մօտ:

Ամփոփապէս կամուրջին տակ կը գտնուի Մուխսոնց Տրաղացը, որ ամենամեծերէն մէկն էր Արագածոտնի մէջ: Թէեւ ջրաղացի տարածքը եւս սեփականաշնորհուած է եւ կը համարուի վճարովի հանգստեան գօտի, այստեղ կարելի է գալ եւ պարզապէս նստիլ գետի ափին:

Ի դէպ, Քասախի ջուրերուն մէջ նաեւ իշխան կ'որսան: Երբ գարունը նոր կը բացուի, Քասախի ափին դուրս կու գայ «ջրկոտեմը»: Այն նման է սովորական կոտեմի, միայն կ'աճի անմիջապէս ջուրի կողքին: Կ'ըսեն, ժամանակին աւանդոյթ կար՝ իջնել ձոր, ջրկոտեմ քաղել, դնել գայն լաւաշի մէջ եւ ուտել:

«Պարտադիր» տեսարժան վայրերն

Եթէ կամուրջով անցնիք եւ երթաք դէպի վեր, կը յայտնուիք «Կարմրաւորի թաղին մէջ», ուր կը գտնուի Պերճ Պռոշեանի տուն-թանգարանը: Այն հիմնուած է 1948-ին՝ գրողի հայրական տան տեղը, իսկ ներկայիս շէնքը կառուցուած է 1990-ին:

Թանգարանի ներսը կարելի է ծանօթանալ գրողի գործունեութեան վերաբերող նիւթերուն, անձնական իրերուն, որոնց շարքին կայ նաեւ գրողին ձեռնափայտը՝ Ղազարոս Աղայեանի փորագրած գլուխով:

Պռոշեանն ու Աղայեանը մտերիմ ընկերներ եղած են, սակայն սիրած են վիճիլ տարբեր թեմաներու շուրջ: Պռոշեանն ալ այդ յատուկ պատուիրուած ձեռնափայտով կը սիրէր զբօսնել եւ ըսել, որ «Աղայեանի բակէն բռնած կը պղծուի»:

Թանգարանի տարածքին կայ նաեւ թոնրատուն, մանա՛ն ցանկութեան պարագային այգիին մէջ կը կազմակերպուին նաեւ հիւրասիրութիւններ: Այստեղ տեղի կ'ունենան նաեւ տարբեր ներկայացումներ:

Այս շրջակայքին, ուր կանգնած են մէկ յարկանի խարիւղ տունները, կարելի է մշտապէս հանդիպիլ զբօսաշրջիկներու, քանի որ այստեղ կը գտնուին Աշտարակի ամենայայտնի եւ ինչ երեք եկեղեցիները՝ Կարմրաւորը, Ծիրանաւորը եւ Սպիտակաւորը:

Եղեկեցիներու անունն ծագման հետ շատ գեղեցիկ, բայց շատ տխուր առասպել կապուած է՝ երեք քոյրերու եւ Սարգիս անունով երիտասարդի մասին: Ըստ առասպել-

լին, քոյրերը միաժամանակ կը սիրահարին Սարգիսին եւ աւագ քոյրերը, որոշելով երջանկութեան իրաւունքը զիջիլ փոքրին, կը հազիւ կարմիր եւ ծիրանագոյն զգեստներ եւ կը նետին ձորը: Փոքր քոյրն ալ, իմանալով այդ մասին, կը հազիւ սպիտակ զգեստ եւ նոյնպէս իրեն կը նետէ ժայռէն: Խեղճ Սարգիսն ալ կը դառնայ ճգնաւոր: Հետագային ձորի բերանին երեք եկեղեցի կը յայտնուին, որոնք կ'անուանուին քոյրերու վերջին օրուայ զգեստներու գոյներով:

Սպիտակաւորն ու Ծիրանաւորը կը գտնուին Պռոշեանի տուն-թանգարանէն քիչ մը ներքեւ՝ «Բերդաթաղ»-ի մէջ: Ծիրանաւորը Աշտարակի ամենահին եկեղեցին է: Որոշ տուեալներով՝ նախաքրիստոնէական ժամանակ այդ վայրին մէջ վիշապապաշտութեան տաճար եղած է: Այնուհետեւ, շատ հեթանոսական վայրերու պէս, տաճարը վերացուցած են եւ անոր հիմքերուն վրայ կառուցած են եկեղեցի, որ 5-6-րդ դարերուն վերակառուցուած է որպէս եռանկա բազիլիկ եկեղեցի: Աւելի ուշ այն ծառայած է նաեւ որպէս ամրոց, ինչի համար ստացած է Փոքրաբերդ անունը:

19-րդ դարուն տեղի ունեցած երկրաշարժի հետեւանցով եկեղեցին կիսաւեր է՝ կը բացակային տանիքը եւ պատերէն մէկը: Ներսը շատ խրայատուկ, միստիկ լոյսով է:

Սպիտակաւորը կանգնած է անմիջապէս ձորի բերանին: Կարմրաւորն տուֆէ կառուցուած փոքրիկ եկեղեցի է՝ երկու մուտքով, որոնցմէ մէկը դուրս կու գայ քարափի վրայ: Եկեղեցւոյ պատերը ամբողջովին պահպանուած են, փլուզուած է միայն տանիքը:



Կարմրաւորը կամ Սուրբ Աստուածածին եկեղեցին կը գտնուի Պռոշեանի տուն-թանգարանէն վերեւ: Այն կառուցուած է 7-րդ դարուն եւ միակն է Հայաստանի մէջ, որ պահպանած է իր կարմիր տանիքը: Կարմրաւորի մոզութիւնը ներսը թաքնուած է՝ անհաւանական զմբէթին մէջ:

Այս եկեղեցիին մասին շատ գեղեցիկ տողեր գրած է 20-րդ դարի մեծագոյն ռուս բանաստեղծ Օսիփ Մանտելշթեյնը:

Կարմրաւորի բակին մէջ է թաղուած բանաստեղծ Գեորգ Եմիլը:

Pascal & Diodato

Աշտարակը ժամանցային վայրերով լի քաղաք չէ: Այստեղ կան քանի մը սրճարաններ եւ ճաշարաններ, մասնաւորապէս՝ քաղաքի ձախ ափին: Բնակիչները կը խոստովանին, որ երիտասարդներու համար այստեղ հետաքրքրութիւններ գրեթէ չկան: Սրճարաններէն կ'առանձնանայ Pascal & Diodato-ն: Այն կը գտնուի Կարմրաւոր եկեղեցիի հարեանութեամբ:

Սրճարանը ստացած է իր անուանումը երկու հայի պատուին. Երոպայի առաջին սրճարանը Լոնտոնի մէջ բացած է ծագումով հայ Յարութիւն Փաքալը՝ 1652-ին: Իսկ 1685-ին աստրիաբնակ Յովհաննէս Աստուածատուրը (Տիտաթոս) հիմնած է առաջին սրճարանը Վիեննայի մէջ:

Աշտարակի սրճարանն ալ 2010-ին բացած են Ֆրանսայէն եւ Աստրիայէն եկած լիբանանահայեր Փիեր եւ Տիրան Պատղատեանները: Աւելի վաղ՝ 2007-ին, եղբայրները Աշտարակի մէջ հիմնած են շատերու կողմէ արդէն սիրուած Gourmet dourme տուրմի արտադրութիւնը:

Pascal and Diodato կը սիրեն նաեւ հարեան քաղաքները գալ եւ նոյնիսկ հարսանեաց խնձոյքներ կը կազմակերպեն այստեղ: Հոկտեմբերին սրճարանին մէջ տեղի կ'ունենայ ամենամեայ «Պոպոկի տօնը՝ Պոպոկի տան մէջ» միջոցառումը:

«Այրուծի»

Աշտարակի մէջ վայր մը կայ, որ մէկ անգամ այցելելէ յետոյ կը սկսիս անընդհատ մտածել այստեղ վերադառնալու մասին: Այդ «Այրուծի» հեծեալ ակումբն է. այստեղ կրնանք մասնակցիլ ձիեր կերակրելուն, զբօսանքին, ձեզի կը սորվեցնեն առաջին անգամ ձի նստիլ եւ տիրապետել ամենակարեւոր հմտութիւններուն: Աւելի քան 20 տարիէ Ձիարշաւարանի տարածքին նաեւ մանկական ամառանի ճամբար կը գործէ: Առողջական խնդիրներ ունեցող երեխաները եւս կը բերեն այստեղ՝ հիփոթոլոժման:

ԱՄՍՐ ՉԱԿԱՆ

ԵՐՈՊԱՅԻ ԿԻՆԵՐՈՒ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ ԽՍՐ. Ա. ՉԱԿԱՆ ԶԱՅԱՍՏԱՆ ԶԻՉԵՑԱՄ



Շաբաթավերջին սկսան Երոպայի կիներու ֆուտբոլի ախոյեանութեան խմբակներու գտումի առաջին հանգըր-ւակի մրցումները: Ա. լիկային մէջ, խմբակներուն առաջին երկու դիրքերը գրաւող հաւաքականները կը հասնին աւարտական մրցաշարը: 3-րդ եւ 4-րդ դիրքերը գրաւող խումբերը պիտի մասնակցին փլէյ-օֆի մրցումներուն: Բ. լիկային մէջ, առաջին 3 դիրքերը գրաւող հաւաքականները պիտի մասնակցին փլէյ-օֆի մրցումներուն: Իսկ Գ. լիկային մէջ, որու մաս կը կազմէ Յայաստանի հաւաքականը, խմբակին առաջին դիրքը գրաւող խումբը պիտի մասնակցի փլէյ-օֆի: Ա. լիկային մէջ, Իտալիա կրցաւ յաղթել Յոլանտայի գօրաւոր հաւաքականին, «Ռոմա»-ի յարձակող Ճիաչինթիի՝ 4-րդ եւ «Ինթեր Միլան»-ի յարձակող Պոնֆանթինիի՝ 59-րդ վայրկեաններուն նշանակած կոլերով, «Ռոմա»-ի կիսապաշտպան Ժիուլիանոյի փոխանցումով: Գ. լիկային մէջ, Յայաստանի հաւաքականը իր դաշտին վրայ զիջեցաւ Ռումանիային: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Ա. լիկա. Ա. խմբակ. - Նորվեգիա - Ֆիլիպինա 4-0
Իտալիա - Յոլանտա 2-0
Բ. խմբակ. - Չեխիա - Դանիա 1-3
Պելճիքա - Սպանիա 0-7
Գ. խմբակ. - Անգլիա - Շուէտ 1-1
Ֆրանսա - Իրլանտա 1-0
Դ. խմբակ. - Աւստրիա - Գերմանիա 2-3
Իսլանտա - Լեհաստան 3-0
Բ. լիկա. Ա. խմբակ. - Չուիցերիա - Թուրքիա 3-1
Յունգարիա - Ատրպէյճան 1-1
Բ. խմբակ. - Սլովակիա - Իսրայէլ 2-0
Սերպիա - Սլովովիա 0-0
Գ. խմբակ. - Յիւս. Իրլանտա - Մալթա 0-0
Փորթուկալ - Պոսկիա-Յերցեկ. 3-0
Դ. խմբակ. - Կալէս - Խորուաթիա 4-0
Ուքրանիա - Զոնտով 2-0
Գ. լիկա. Ա. խմբակ. - Կիպրոս - Պելառոսիա 0-3
Վրաստան - Լիթուանիա 2-2
Բ. խմբակ. - Սլովենիա - Մոլտովա 2-0
Լաթվիա - Յիւս. Սակեդոնիա 3-4
Գ. խմբակ. - Մոնթենեկո - Աստորրա 6-1
Յունաստան - Ֆարո Կղզ. 1-0
Դ. խմբակ. - Յայաստան - Ռումանիա 0-5
Ղազախստան - Պուկարիա 0-1
Ե. խմբակ. - Լիքսեմպուրկ - Ալպանիա 2-1

ԼԻԲԱՆԱՆԻ Գ. ՂԱՍԱԿՐԳԻ ԱՆՈՅ. 7-ԻՂ ՉԱԿՐՈՒՄ Զ.Ս.Ս.-Ի ԵՐԿՐՈՐԴ ՅԱՂԹԱՆԱԿԿ

Շաբաթավերջին տեղի ունեցան Լիբանանի ֆուտբոլի Գ. դասակարգի ախոյեանութեան դարձի երկրորդ՝ 7-րդ հանգըրուակի մրցումները: Այս հանգըրուակի մրցումներու ծիրին մէջ, Գ. խմբակին մէջ, 4-րդ դիրքը գրաւող «Զ.Ս.Ս.» մրցեցաւ 2-րդ դիրքը գրաւող Յունի Թահթայի «Շապապ»-ին դէմ, «Աղբը»-ի մարզադաշտին վրայ ու արձանագրեց իր երկրորդ յաղթանակը: Մրցումին միակ կողմը նշանակեց Ալի Զապալան 10-րդ վայրկեանին: Թուրայի «Ռիսալա»-ն շարունակեց իր յաղթարշաւը ու արձանագրեց իր 6-րդ յաղթանակը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Գ. խմբակ. - Զ.Ս.Ս. - Շապապ Յունի Թահթա 1-0
Ահլի Սայտա - Ռիսալա Թուրա 1-2
Յիլալ Յարըթ Նամմէ - Շապապ Պըրթ 2-1
Ղասալորում. 1) Ռիսալա 19 կէտ 17-1, 2) Շապապ Յունի Թահթա 10 կէտ 12-8, 3) Յիլալ 9 կէտ 5-7, 4) Զ.Ս.Ս. 9 կէտ 8-11, 5) Ահլի Սայտա 4 կէտ 6-13, 6) Շապապ Պըրթ 4 կէտ 3-11

ԶԻՆԱԴԱԴԱՐ ՅԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈՐՉ

(Շարունակուած Ա. էջէն)

րանի կործանումին հետեւանքով մահացած իրանցիներուն թիւը բարձրացաւ 7-ի՝ ներառեալ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ յեղափոխական պահակազուկի ամենէն բարձրաստիճան ղեկավարը՝ գօրավար Մոհամմատ Ռիտա Չահիտին, տեղակալը՝ Մոհամմատ Յատի Յատ Ռահիմին եւ զինուորական հինգ կցորդներ: Իսրայէլի պաշտպանութեան նախարար Եոաք Կալանթ միւս կողմէ յայտնեց, որ պաշտպանական նախապատրաստութիւնները ամբողջացած են զսպելու Իրանէն ենթադրեալ յարձակում մը եւ հակադարձելու:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Միացեալ Թագաւորութեան վարչապետ Ռիշի Սունք կը ուղղեց անյայաղ զինադադար յայտարարելու Կա-



զայի մէջ՝ յանգելու համար երկարատեւ հանդարտութեան: «Տեսնուած էմ Կազայի արիւնահեղութենէն եւ կը կ'ուղղեմ անյայաղ վերջ տալու պատերազմին», ըսաւ Սունք:

Իսկ արտաքին գործերու նախարար Տէյլիտ Զամերն վստահեցուց, որ իրենք առանց պայմանի օգնութիւն չեն տրամադրեր Իսրայէլին, այլ յանձնառու կը մնան միջազգային մարդասիրական օրէնքներուն: Նախարարը կը մեկնաբանէր Կազայի մէջ Յամաշխարհային կեդրոնական խոհանոց կազմակերպութեան թիրախաւորումը, որուն հետեւանքով զոհուեցաւ կազմակերպութեան 7 աշխատակից՝ ներառեալ երեք բրիտանացի: «Ժողովրդավարական յաջող պետութենէ մը կ'ակնկալենք յանձնառու մնալ միջազգային մարդասիրական կարգերուն», ըսաւ Զամերն՝ խօսելով իսրայէլեան վարչազիծին մասին: Ան ահագանցեց նաեւ Կազայի մէջ համատարած սովի վտանգէն, եթէ Իսրայէլ չարտօնէ մարդասիրական յաւելեալ օգնութիւններու մուտքը:

Եմենի մէջ իշխող հուսիները յայտարարեցին, թէ, որպէս գորակցութիւն պաղտօտիցիներուն եւ հակադարձու-



թիւն ամերիկեան-բրիտանական շարունակական հարուածներուն, զինուած ուժերը անցնող երեք օրերուն գործադրած են զինուորական հինգ գործողութիւններ՝ թիրախ դարձնելով ամերիկեան, իսրայէլեան եւ բրիտանական հինգ նաւեր, հեռահար հրթիռներու եւ անօդաչու չեզոք սարքերու գործածութեամբ: Յուսիներու յայտարարութիւնը նշեց, թէ պիտի շարունակէ հարուածել Իսրայէլի հետ առնչուած թիրախներ, մինչեւ Կազայի դէմ յարձակումի առկախումը:

ՈՒԵՐԱՆԻՈՅ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ԿՏԱՆԳԸ

Ուքրանիոյ նախագահ Վոլոտիմիր Չելսնսքի ահագանցեց, որ Զինե պիտի պարտուի Ռուսիոյ դէմ պատերազմը,



Եթէ ամերիկեան ընկերը անյայաղ չհամաձայնի տրամադրել զինուորական յաւելեալ օգնութիւն՝ զսպելու ռուսական յարձակումները: Ըստ Չելսնսքիի, եթէ Ուքրանիա պարտուի պատերազմը, այլ երկիրներ եւս ենթակայ պիտի ըլլան յարձակումի:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Ազգային հերոս Անդրանիկի անտիպ նամակները», կազմեց, խմբագրեց, ծանօթագրեց եւ հրատարակութեան պատրաստեց Երուանդ Փամպուլեան, յառաջաբանի հեղինակ՝ Ամատուկի Վիրաբեան, «Վեմ» ամսագրի մատենաշար թիւ 8, Երեւան, 2024, 252 էջ (ազգային հերոսի՝ Զ.Յ.Դ.ի Պոսթոնի արխիւին մէջ պահուող, 1901-1912 ժամանակաշրջանին գրած նամակները):

- Բաղդասարեան Էդիկ, «Յայկական Կիլիկիայի համապարփակ պատմութիւն», 6 հատորով, հրատարակիչ՝ Յայկական ուսումնասիրութիւնների կենտրոն, Թորոնթօ - Գանատա, 2024, 406 + 416 + 420 + 438 + 394 + 446 էջ (www.Edic-Baghdasarian.com):

- Ղազարեան Վաչէ, «Արմենական կուսակցութիւնը (ակնարկներ)», «Մայրենի» հրատարակչութիւն, Փորթսմութ, Ռոտ Այլընտի Նահանգ, Ա.Մ.Ն., 2024, 69 էջ:

- Միլլեր Աստրեա, Յարութիւնեան Յարութիւն Գ., Յելլեր Տակմար եւ Թամբէ Մարթին (խմբագիրներ), «Արցախի մշակութային ժառանգութիւնը - Յայոց պատմութիւնը եւ դրա հետքերը Լեռնային Ղարաբաղում (Das Kulturelle Erbe von Arzach - Armenische Geschichte und deren Spuren in Berg-Karabach)», Զիլի համալսարանի հրատարակչութիւն, Երֆուրթ - Գերմանիա, 2024, շուրջ 530 էջ (գերմաներէն, հայերէն եւ անգլերէն յօդուածներու ժողովածու): Լոյս տեսած է գերմանական, հայկական ու երոպական 10 կառույցներու հովանաւորութեամբ եւ աջակցութեամբ:

- Յակոբեան Յրանոյշ, «Յայրենիք-սփիւռք գործակցութեան տասնամեայ ուղին (2008-2018 թթ.)», երեք հատորով, խմբագիր՝ Վիքթոր Կատվալեան, «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարան, Երեւան, 2024, գումարային 1994 էջ (Յ.Յ.ի սփիւռքի երթմանի նախարարի 10-ամեայ գործունեութեան ամբողջական ներկայացումը, լուսանկարներ):

- «Նամակներ բժիշկ Գրիգոր Դալիթեանէն Թուրքիոյ հայոց կացութեան, համաձայնականներու եւ թուրք ազգայնական շարժման մասին (1919-1920)», խմբագրեց եւ ծանօթագրեց Վաչէ Ղազարեան, «Մայրենի» հրատարակչութիւն, Փորթսմութ, Ռոտ Այլընտի Նահանգ, Ա.Մ.Ն., 2024, 239 էջ:

- Նշանեան Սեւան, «Թուրքիոյ հայկական աշխարհագրութիւնը (Turkiye'nin Ermeni Coğrafyası)», «Լիպերուս (Liberus)» հրատարակչութիւն, Սթամպուլ, 2024, 728 էջ (16 x 24 սմ.) (Յայր Սուքիաս Եփրիկեանի տպագրեալ երկ-հատոր «Պատկերազարդ քննադատական բանաստեղծութիւններու յօդուածներու թարգմանութիւններ» ուրիշ հեղինակներէ վերցուած լրացումներով) (թրքերէն):

- Շահպազ Ստեփան, «Ազգ. սահմանադրութիւնը եւ իր վկայութիւնը՝ հայ բնոյթին վրայ», ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ Վաչէ Ղազարեանի, «Մայրենի» հրատարակչութիւն, Փորթսմութ, Ռոտ Այլընտի Նահանգ, Ա.Մ.Ն., 2024, 153 էջ:

- Չեքիճեան Յարութ, «Յայաստանի Յանրապետութեան կազմաւորումը եւ Սեւրի դաշնագիրը», «Սիրուհի Պուտազեան» ֆոնտի հրատարակչութիւն, «Ազգակ»-ի մատենաշար թիւ 1, Պէրլուք, 2024:

- «Ռուբէնի յուշերը», Գ. Եւ Դ. հատորակներ, հրատարակչութիւն «Ռուբէն» մատենաշարի, տպարան Չաւէն եւ որդիք, Պէրլուք, 2023 (Յ.Յ.Դ.ի գործիչ Ռուբէն Տէր Միսսեանի յուշերը):

- Տէվլէթեան Սմբատ, «Անթիլիասի տաճնապահ եռութիւնը եւ սփիւռքին պատասխանատուութիւնը», յառաջաբանի եւ յաւելումների հեղինակ՝ Վաչէ Ղազարեան, «Մայրենի» հրատարակչութիւն, Փորթսմութ, Ռոտ Այլընտի Նահանգ, Ա.Մ.Ն., 2024, 177 էջ:

- Տորֆման-Լազարեան Իկոր եւ Խաչատուրեան Յարութիւն (խմբագիրներ), «Կոթողներ եւ ինքնութիւններ Կովկասի մէջ - Ղարաբաղ, Նախիջեւան եւ Ատրպէյճան ժամանակակից աշխարհաքաղաքական հակամարտութեան մէջ» (Monuments and Identities in the Caucasus - Karabagh, Nakhichevan and Azerbaijan in Contemporary Geopolitical Conflict), յառաջաբանի հեղինակ՝ Վեեսան Տիւրքեր, TSEC (Texts and Studies in Eastern Christianity) մատենաշար, 31-րդ հատոր, «Պրիլ» (Brill Academic Pub) հրատարակչութիւն, Լայպտըն-Պոսթոն, 2023, 552 էջ (8 երկիրներէ 17 զինականներու եւ փորձագետներու՝ Ատրպէյճանի ցեղասպան քաղաքականութիւնը ներկայացնող յօդուածներու ժողովածու, լուսանկարներ) (անգլերէն):

- Փոմիէչիսքի Ատամ, Ֆետորովիչ Զիշլոքֆ, Թադեոսեան Աղասի եւ Օրդեան Գոռ, «Զաղաքացիական բնակչութիւնը՝ Լեռնային Ղարաբաղի պատերազմի կացութեան դիմաց. Կորուստի եւ տառապանքի մարդաբանութիւնը» (Ludnosc cywilna wobec wojny w Gegrkim Karabachu. Antropologia straty i cierpieni), «Ռիեփ» (Riepe) հրատարակչատուն, Կտանսք - Լեհաստան, 2023, 160 էջ (վերջին տարիներուն Արցախի հայութեան տառապանքներուն մարդաբանութիւնը՝ դաշտային աշխատանքներու եւ հարցազրոյցներու հիմքով) (լեհերէն): Յրատարակչութիւնը իրականացած է Լեհաստանի ակադեմիական փոխանակման ազգային գործակալութեան դրամաշնորհով:

Պատրաստեց ԳԵՐՈՂ ՆԱՔԱԼԻ (Շազըճեան)

Advertisement for 'ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀԱՆՈՅ' (Armenian Culinary) featuring various recipes like 'ՀԱՃՃԸ' (Djadzdz), 'ՈՒՐՅԱ' (Urya), 'ԱՅՆԹԷՊ' (Ayntep), 'ՄԱՐԱՇ' (Marash), and 'ՍՈՒՍԱ ԼԵՌ' (Sousaleh) with images and descriptions.

Advertisement for 'ԱՐԵԿ' (Arek) dance troupe, featuring a group photo and contact information: 31 ՄԱՅԻՍ - 1 ՅՈՒՆԻՍ - 2 ՅՈՒՆԻՍ.

Advertisement for 'ARARAD DAILY NEWSPAPER' with contact details and a logo in Arabic script.